Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 56 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի բնակավայրերում իրականացնել հետևյալ ծրագրերը՝ 1) դպրոցների մարզադահլիճների ու մարզահրապարակների, մասնակի նորոգում, կահավորում. 2) մանկապարտեզների մասնակի նորոգում, կահույքի և գույքի տրամադրում. 3) համայնքային կենտրոնների մասնակի նորոգում, կահույքի ու գույքի տրամադրում. 4) դպրոցահասակ երեխաներին էկոլոգիական գյուղատնտեսության տարրերի ծանոթացում՝ արտադասարանային դասընթացների կազմակերպման և դպրոցամերձ գոտիների բարեկարգման միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	1) «ՇԷՆ-Ֆրանսիա» բարեգործական կազմակերպություն, հասցե՝ 24 բյու դը Մոբյուժ, 75009, Փարիզ, Ֆրանսիա 2) Հաց աշխարհին - Գերմանիայի Եկեղեցիների Ընկերակցություն, հասցե՝ Կարոլին Միշլեզ փողոց 1, 10115, Բեռլին, Գերմանիա 3) Շվեյցարիայի Միջեկեղեցական աջակցություն (ՀԷԿՍ-ԷՊԵՌ),

		հասցե՝ Սեմինարշտրասսե 28, 8042 Ցյուրիխ, Շվեյցարիա 4) «Ցալկեզյան հիմնադրամ», հասցե՝ 1005 Էլջին ստթրիթ Ուեսթ, Սուիթ 200, Քոբուրգ, Օնտարիո, Կանադա
4.	Ծրագիրը կատարողը	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն, (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Նալբանդյան 110, ՀՎՀՀ՝ 01503283)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի բնակավայրեր, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	120,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերի համայնքները: Բնակավայրերը, որտեղ կիրագործվեն մարդասիրական ծրագրեր, կընտրվեն «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության ուսումնասիրությունների միջոցով՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ բաժնի 4.3 գլուխը: Ծրագիրը չի իրագործվի այն բնակավայրերում, որոնք ներառված են կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված՝ մինչև 2026 թվականը 500 մանկապարտեզների, նախակրթարանների և 300 դպրոցների կառուցման, հիմնանորոգման կամ վերակառուցման միջոցառումների իրականացման ցանկում:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի փետրվարի 4-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) դպրոցական մարզադահլիճների և մարզահրապարակների մասնակի նորոգում և կահավորում՝ 28,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է

		իրականացնել 2024 թվականի փետրվարի 4-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 2) մանկապարտեզների մասնակի նորոգում, կահույքի, գույքի ձեռքբերում և տրամադրում՝ 56,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի փետրվարի 4-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 3) համայնքային կենտրոնների մասնակի նորոգում, կահույքի, գույքի ձեռքբերում և տրամադրում՝ 32,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի փետրվարի 4-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: 4) դպրոցահասակ երեխաներին էկոլոգիական գյուղատնտեսության տարրերի ծանոթացում՝ արտադասարանային դասընթացների կազմակերպման և դպրոցամերձ գոտիների բարեկարգման միջոցով՝ 4,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի փետրվարի 4-ից մինչև 2028 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ շինանյութերի, գործիքների, սպորտային գույքի, մանկապարտեզի կահույքի, մանկապարտեզի գույք (հեռուստացույց, խաղալիքներ, երաժշտական գործիքներ), խոհանոցային տեխնիկայի, համայնքային կենտրոնների կահույքի, էկոլոգիական կրթության դասագրքերի ձեռքբերում՝ 80,000,000 դրամ արժողությամբ. 2) սպորտային դահլիճների ու մարզահրապարակների, մանկապարտեզների, համայնքային կենտրոնների նորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 40,000,000 դրամ արժողությամբ.
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցությունը նախատեսված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ինչպես նաև նշված մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Համաձայն պայմանագրերում նշված ժամկետների՝ շնորհատու կազմակերպությունները կիրականացնեն ծրագրերի անկախ վերահսկում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ